# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

# Հ Ր Ա Մ Ա Ն

« 29 » օգոստոսի 2022թ.

№ 674-ՀՆ

## «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՆԵՐՈՒՄ ՆԵՐԱՌՎՈՂ ՄԱՆՐԱԾԱԽ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՓԱՍՏԱՑԻ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2022 թվականի մայիսի 25-ի №234-Ն որոշումը, Հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 9-ի №397Ա որոշման 2-րդ կետով հաստատված «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիայի պայմանների 28-րդ կետը՝ **հրամայում եմ.**

1. Ընկերության կողմից 2022 թվականի օգոստոսի 8-ին ներկայացված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագների վերանայման հայտի ուսումնասիրության շրջանակում սակագների վրա ազդեցություն ունեցող ջրամատակարարման ծավալների փոփոխության գործոնի գնահատման նպատակով Ընկերության գործունեության սպասարկման տարածքում 2022 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում իրականացնել նշված ծառայությունների մատուցման սակագների հաշվարկներում ներառվող՝ Ընկերության կողմից գրանցված մանրածախ ջրամատակարարման փաստացի ծավալների և Հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 29-ի №498Ա որոշման պահանջների կատարման մոնիթորինգ՝ կամայական, շղթայական և ըստ օգտագործման ծավալի (քանակի) ընտրանքի մեթոդների համակցությամբ: Մոնիթորինգի արդյունքը՝ հաշվարկված լրացուցիչ մանրածախ ջրամատակարարման ծավալը կներառվի սակագների հաշվարկում:
2. Մոնիթորինգի իրականացման համար ստեղծել աշխատանքային խումբ՝ հետևյալ կազմով.

   1) Էդուարդ Զառանցյան — Հանձնաժողովի նախագահի խորհրդական,
   2) Արթուր Համբարձումյան — Հանձնաժողովի նախագահի օգնական,

| | | |
|---|---|---|
| 3) | Աշոտ Ուլիխանյան | Հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության պետ, |
| 4) | Հայկ Ղոսալմյան | Հանձնաժողովի ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչության պետ, |
| 5) | Մարիամ Մոմջյան | Հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության սակագնային բաժնի պետ, |
| 6) | Արտյոմ Ղազարյան | Հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ, |
| 7) | Կարեն Մարկոսյան | Հանձնաժողովի ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչության տեխնիկական բաժնի գլխավոր մասնագետ, |
| 8) | Արման Դովլաթյան | Հանձնաժողովի ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչության տեխնիկական բաժնի խորհրդական-առանձին գործառույթներ համակարգող, |
| 9) | Կարապետ Հարությունյան | Հանձնաժողովի ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչության տեխնիկական բաժնի գլխավոր մասնագետ, |
| 10) | Էդուարդ Միհրանյան | Հանձնաժողովի ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչության տեխնիկական բաժնի ավագ մասնագետ, |
| 11) | Երջանիկ Գևորգյան | Հանձնաժողովի գործերի կառավարման վարչության գնումների և տնտեսական բաժնի գլխավոր տնտեսագետ: |

3. Ընդունել ի գիտություն, որ Մոնիթորինգի աշխատանքներին կներգրավվեն նաև՝
   1) Ջրային կոմիտեի 2022 թվականի օգոստոսի 26-ի №01/06/3758-2022 գրությամբ նշված անձինք՝ համաձայն հավելվածի,
   2) սպառողների շահերը պաշտպանող կազմակերպությունների ներկայացուցիչները՝ վերջիններիս համաձայնությամբ:
4. Մոնիթորինգի համակարգումը վերապահել Հանձնաժողովի անդամներ Կամո Սարգսյանին և Սերգեյ Աղինյանին:

***ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահի պարտականությունները կատարող՝***

ՍԵՐԳԵՅ ԱՂԻՆՅԱՆ

***Ս. Աղինյան***

**Հավելված**

Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող
հանձնաժողովի նախագահի 2022 թվականի
օգոստոսի 29-ի
№ 674-ՀՆ հրամանի

ՑԱՆԿ
Ջրային կոմիտեի 2022 թվականի օգոստոսի 26-ի №01/06/3758-2022 գրությամբ
ներկայացված անձանց

| | | |
|---|---|---|
| 1. | Մարտիրոս Նալբանդյան | Ջրային կոմիտեի նախագահի տեղակալ (համակարգող) |
| 2. | Վահագն Օհանջանյան | Ջրային կոմիտեի մոնիթորինգի և վերլուծությունների վարչության պետ |
| 3. | Սուրեն Ասրյան | Ջրային կոմիտեի մոնիթորինգի և վերլուծությունների վարչության պետի տեղակալ |
| 4. | Արթուր Օհանյան | Ջրային կոմիտեի գույքի կառավարման և ներդրումների իրականացման վարչության պլանավորման և ներդրումների բաժնի պետ |
| 5. | Արտավազդ Մակարյան | Ջրային կոմիտեի մոնիթորինգի և վերլուծությունների վարչության գլխավոր մասնագետ, |
| 6. | Արտավազդ Սարգսյան | Ջրային կոմիտեի գնումների վարչության գլխավոր մասնագետ, |
| 7. | Գագիկ Փահլևանյան | Ջրային կոմիտեի գույքի կառավարման և ներդրումների իրականացման վարչության իրավախորհրդատու, |
| 8. | Սարիբեկ Աբազյան | Ջրային կոմիտեի գույքի կառավարման և ներդրումների իրականացման վարչության գույքի կառավարման և մոնիթորինգի բաժնի առաջի կարգի մասնագետ, |